Քննարկվել և հաստատվել է՝ նոր խմբագրությամբ

<<Արթիկի պետական քոլեջ>>

ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

Նախագահ՝ _____ Հ.Ալեքսանյան

31.08.2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

<<ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ>> ՊՈԱԿ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՈՒՍԱՆՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

-2022-

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույնով սահմանվում է «Արթիկի պետական քոլեջի» (այսուհետ՝ Քոլեջ) կողմից կազմակերպված՝ դասախոսական անձնակազմի և դասավանդման որակի արդյունավետության գնահատումը ուսանողների կողմից,ինչպես նաև Քոլեջի դասախոսական անձնակազմի(այսուհետև՝ դասախոս) և դասավանդման որակի արդյունավետության գնահատման,հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:

1.2. Սույն կանոնակարգը սահմանում,ինչպես նաև դրանում լրացումներ և փոփոխություններ կատարելու առաջարկը ներկայացնում է Քոլեջի տնօրինական կամ մանկավարժական խորհուրդը, քննարկում և հաստատում է Քոլեջի կառավարման խորհուրդը:

1.3. Հարցումը համարվում է ուսանողների կողմից ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և դասախոսական անձնակազմի որակի արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:

1.4Հարցումը ուսումնական գործընթացի բարելավման կարևորագույն բաղադրիչ է, որի անցկացման նպատակն է ստանալ տեղեկատվություն Քոլեջի դասախոսական անձնակազմի և դասավանդման որակի արդյունավետության վերաբերյալ:

1.5 Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում Քոլեջի Կառավարման խորհրդի կողմից հաստատվելուցհետո:

1. ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

2.1. Հարցումն իրականացվում է սույն կանոնակարգի համաձայն:

2.2. Հարցման իրականացումը ապահովում է Որակի ներքին ապահովման կենտրոնը (ՈՆԱԿ):

2.3. Հարցման անցկացումը իրականացվում է որակի պատասխանատուի կողմից:

2.4. Հարցումը կարող է իրականացվել յուրաքանչյուր կիսամյակում՝ ըստ անհրաժեշտության:

2.5. Հարցումն անանուն է և կարող է անցկացվել թղթային կամ օնլայն եղանակով:

2.6. Հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից հարցաշարի հարցերին պատասխանելով: (Հավելված 1)

2.ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

3.1. ՈՒսանողների հարցման արդյունքները վերլուծվում, գնահատվում և պահպանվում են ՈՆԱԿ-ի կողմից:

3.2. Հարցաթերթի ձևանմուշն ունի առաջարկությունների և կարծիքների համար հատկացված բաժին:Ուսանողները այդ հատվածում կարող են ներկայացնել դասավանդման որակի և ուսումնական գործընթացի բարելավմանը միտված իրենց առաջարկները: Բացի այդ, ուսանողները կարող են կարծիքներ ներկայացնել յուրաքանչյուր դասախոսի աշխատանքի վերաբերյալ:

3.3. Հարցման արդյունքների վերլուծությունը կատարվում է մեկամսյա ժամկետում:

3.4. Հարցման ընդհանուր վերլուծության արդյունքները դրական են գնահատվում առնվազն 80% բավարարվածության դեպքում: 80% բավարարվածությունը ձևավորվում է միանանշանակ այո /5/ և ավելի շուտ այո, քան ոչ /4/ գնահատման չափանիշների տոկոսային հանրագումարով:

3.5. Հարցման արդյունքները պահվում են քոլեջում 5 տարի ժամկետով:

3.6. Հարցաթերթում գնահատականների ուղղումները և ջնջումները չեն հաշվարկվում:

3.ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

4.1. Հարցման արդյունքների վերլուծությունը քննարկվում և ամփոփվում է ՈՆԱԿ-ի նիստում՝ պահպանելով էթիկայի նորմերը: Քննարկման արդյունքում մշակվում են առաջարկություններ և բարելավման մեխանիզմներ:

4.2. Դասախոսն իրավունք ունի ստանալու իրեն վերաբերող գնահատականներն ու կարծիքները և ծանոթանալու դրանց:

4.3. Հարցման արդյունքները օգտագործվում են միայն ամփոփ տեսքով, իսկ անհատական տվյալների գաղտնիությունը երաշխավորվում է:

4.4. ՈՒսանողական հարցման արդյունքները կարող են օգտագործվել՝

- դասախոսների կողմից դասավանդման մոտեցումների և կիրառվող մեթոդների շարունակական բարելավմանը աջակցելու նպատակով,
- դասախոսների առաջխաղացման և խրախուսման նպատակով:

<<ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ>>ՊՈԱԿ

<<ՈՒսանողի կողմից դասախոսական անձնակազմի և դասավանդմանորակի արդյունավետության գնահատման>>

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Ամիս,ամսաթիվ _____

Հարգելի՛ ուսանող , դուք մասնակցում եք **դասախոսական** անձնակազմի անձնային հատկանիշները, դասավանդման որակի արդյունավետությունը գնահատելու և բարելավելու նպատակով Արթիկի պետական քոլեջի **Որակի ներքին ապահովման կենտրոնի** կողմից կազմակերպված հարցմանը: Այդ նպատակով խնդրվում է առաջադրված հարցերին պատասխանել առավելագույնս օբյեկտիվ և անկեղծ: Հարցումն անանուն է, և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով:

Խնդրում ենք Ձեզ ուշադիր կարդալ և ամբողջությամբ լրացնել թերթիկը , որտեղ անհրաժեշտ է թվարկել ավարտված կիսամյակում Ձեզ դասավանդած բոլոր դասախոսների անուն,ազգանունները,այնուհետև պատասխանել հարցերին:Հարցերը վերաբերում են դասախոսի մասնագիտական, անձնային հատկանիշներին և դասավանդման որակին: Հետևյալ միավորների օգնությամբ գնահատեք հարցերը,թե որքանով է Ձեր կողմից տրված պատասխանը համապատասխանում հարցաթերթիկում նշվածի հետ:

5- Միանշանակ այո
4-ավելի շուտ այո, քան ոչ
3-ավելի շուտ ոչ,քան այո
2- միանշանակ ոչ
1-դժվարանում եմ պատասխանել

Մասնագիտությունը՝.....
Կուրսը՝.....

	ԴԱՍԱԽՈՍԻ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆԸ												
ՀԱՐՑԵՐ													
1.Դասախոսը ներկայացնում էր դասընթացի կառուցվածքը,նպատակը, ակնկալվող արդյունքները:													
2.Դասախոսը նյութը մատուցում է պարզ,հասկանալի,հետաքրքիր, մատչելի և օժանդակում է դասընթացի նյութը յուրացնելուն:													
3. Դասախոսը կիրառում է զանազան հնարներ՝ հմտորեն զուգորդելով ինտերակտիվ և ավանդական մեթոդները:													
4.Դասախոսի մատուցած և պահանջվող նյութերի բովանդակությունը համապատասխանում էր թեմային:													
5.Դասախոսը լսարանում արդյունավետ է կառավարում ժամանակը և ապահովում բոլոր ուսանողների ներգրավվածությունը:													
6. Դասախոսը օժանդակում է ուսանողին մասնագիտական գրականությունից օգտվելու և նյութեր տրամադրելու հարցում:													
7. Դասախոսը բարյացակամ է և հարգալից ուսանողների հանդեպ՝ պահպանելով լսարանում առողջ մթնոլորտ:													
8. Դասախոսը ուսանողներին գնահատում է արդար, թափանցիկ և հիմնավորում գնահատականը:													
9. Դասախոսը լսարանի կարգապահությունը պահպանում է պատշաճ մակարդակով:													
10. Դասախոսը խրախուսում էր ուսանողներին՝ հնարավորություն տալով ազատորեն արտահայտելու իրենց տեսակետը,նպաստում է նրանց վերլուծական,ստեղծագործական,քննադատական մտածողության զարգացմանը:													
11.Կցանկանայի՞ք մասնակցել տվյալ դասախոսի կողմից դասավանդվող մեկ այլ դասընթացի:													
12. Գնահատեք դասախոսի մասնագիտական գիտելիքները իր դասավանդած առարկայից/մոդուլից 1-5 բալային սանդղակով, որտեղ 5- գերազանց 4-լավ, 3-բավարար 2- վատ 1- շատ վատ													
13. Եթե կան այլ ցանկություններ, առաջարկներ և մեկնաբանություններ, կարող եք ավելացնել:													